

## ՀԱՅՈՑ ՀՐԱՇԱՊԱՏՈՒՄ ՀԵՔԻԱԹԻ ՄԻ ՀԵՐՈՍԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

### ԼԻԼԻԹ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

Հայ ժողովրդական հեքիաթներում կա մի ուշագրավ հերոս, որի մասին պատումները տարածված են Արևելյան և Արևմտյան Հայաստանի տարբեր ազգագրական շրջաններում, օրինակ՝ «Դավրիժին տղան» (Արցախ-Ուտիք)<sup>1</sup>, «Ղազըր պահող տղան» (Արցախ-Սյունիք)<sup>2</sup>, «Շահվելադն ու Բանգլիբարը» (Գուգարք.Լոռի)<sup>3</sup>, «Քաչիկի հեքիաթ» (Տուրուբերան. Մուշ-Բուլանդիս)<sup>4</sup>, «Քեչիկ» (Տուրուբերան.Մուշ)<sup>5</sup>, «Քաջանց թագավորի տղու՝ Ուսուֆ Չելեպու հեքիաթ» (Տուրուբերան.Մուշ-Տարոն)<sup>6</sup>, «Ահմատ ու Մահմատ» (Տուրուբերան.Մուշ-Տարոն)<sup>7</sup>, «Անժառանգ թաքավոր» (Գեղարքունիք)<sup>8</sup>, «Տանդալիին հեքեաթն» (Խոտորջուր)<sup>9</sup>, «Կյուն գըլխիկ» (Մոկս)<sup>10</sup> և այլն: Տարբերակների առատությունը, անշուշտ, կերպարի միասնականության վկայությունն է: Նշված հեքիաթները համապատասխանում են Աարնե-Թոմսոնի «Հեքիաթների տիպերի միջազգային համացույցի» AT 530 A թվահամարին:

Հեքիաթների ընդհանուր-սխեմատիկ բովանդակությունը հետևյալն է. հերոսը հեռանում է տնից, ձեռք բերում օգնական՝ նժույգ: Ապա փոխում է արտաքինը. ընդ որում, կերպարանափոխությունը կապված է մազերի հետ. նա թաքցնում է մազերը՝ գլուխը ծածկելով մորթված ոչխարի, գառան կամ ուլի փորով (թափան, կյուն, դառին)՝ ստեղծելով ճաղատության տպավորություն: Այսպես անճանաչելիորեն կերպարանափոխված՝ նա դառնում է թագավորի այգեպանը: Թագավորի փոքր աղջիկն անուսնանում է նրա հետ: Թագավորը հիվանդանում է. կերպարանափոխված հերոսը ձեռք է բերում անհրաժեշտ բուժամիջոցները: Թշնամու գորքը հարձակվում է թագավորության վրա: Հերոսն իր նժույգի օգնությամբ հաղթում է բոլորին, վիրավորվում: Թագավորը կապում է նրա վերքն իր թաշկինակով, թաշկինակով էլ ճանաչում և պարզում է իսկությունը: Հերոսը վերականգնում է իր նախկին արտաքինը և դառնում թագավոր:

<sup>1</sup> Տե՛ս «Հայ ժողովրդական հեքիաթներ» (այսուհետ՝ ՀԺՀ), հ. VI, № 23, Եր., 1973, էջ 116-128:

<sup>2</sup> Տե՛ս ՀԺՀ, հ. VII, № 22, Եր., 1979, էջ 88-92:

<sup>3</sup> Տե՛ս ՀԺՀ, հ. VIII, № 57, Եր., 1977, էջ 375-386:

<sup>4</sup> Տե՛ս ՀԺՀ, հ. X, № 22, Եր., 1967, էջ 107-116:

<sup>5</sup> Տե՛ս ՀԺՀ, հ. XII, № 2, Եր., 1984, էջ 23-28:

<sup>6</sup> Տե՛ս ՀԺՀ, հ. XIII, № 5, Եր., 1985, էջ 40-49:

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղը, № 8, էջ 74-90:

<sup>8</sup> Տե՛ս «Հայ ազգագրություն և բանահյուսություն» (այսուհետ՝ ՀԱԲ), հ. 14, № 6 (14), Եր., 1983, էջ 86-92:

<sup>9</sup> **Յ. Հաճեան**, Հին աւանդական հեքեաթներ Խոտորջրոյ, Վիեննա, 1907, էջ 75-81:

<sup>10</sup> Տե՛ս ՀԺՀ, հ. XVII, № 39, Եր., 2012, էջ 351-369:

Ինչպես ցույց է տալիս հեքիաթի նյութը, հերոսը կերպարանափոխվում է. այս կերպարանափոխությունը ժամանակավոր է, սակայն այդ պատճառով նա ստանում է Քաչլիկ (Քեչլիկ, Քաչլուկ) անունը (տարբերակներից մեկում՝ Կյուն գըլխիկ). այս անունը նրա համար դառնում է յուրահատուկ անձնանուն, որովհետև փոխվում է անճանաչելիորեն, այնպես, որ իր նոր արտաքինով ընկալվում է իբրև բուլղոբլին ուրիշ մեկը:

Հատկանշական է մի հանգամանք. հրաշապատում հեքիաթներում մազերը ծածկելու և անճանաչելիորեն փոխված վերադառնալու մոտիվը հանդիպում է նաև այլ թվահամարներում, ինչպես օրինակ՝ AT 301-ում, AT 303-ում և այլն: Սակայն այս դիպաշարերում դա հավելյալ մոտիվ է, այնինչ AT 530 A թվահամարի հեքիաթներում սա տարբերակիչ և սյուժետային փոփոխակները միացնող միասնական մոտիվ է:

Հեքիաթի տասնմեկ փոփոխակներից վեցում (ՀԺՀ, հ. IV, հ. VI, հ. VIII, հ. XIII, հ. XVII, ՀԱԲ, հ. 14) շեշտվում է այն փաստը, որ երկիրը կառավարող թագավորն անզավակ է. չեն պտղաբերում նաև թագավորական այգին և արքայական նժույգը. հրաշապատում հեքիաթի տրամաբանությամբ՝ բուսական և կենդանական աշխարհի արգասավորությունը կախված է թագավորի՝ սերունդ վերարտադրելու ընդունակությունից: Նման հավատալիքի իրական գոյության փաստը վկայում է Ջ. Ֆրեզերը<sup>11</sup>: Ուշագրավ է, որ հեքիաթի այդ տարբերակներում հերոսի ծնունդը ոչ սովորական՝ գերբնական է. նա ծնվում է հայոց ծիսապաշտամունքային պատկերացումների համակարգում պտղաբերության և անմահության սիմվոլ համարվող, առնական ուժ և զորություն պարգևող խնձորից<sup>12</sup>. անզավակ թագավորին այցելում է դերվիշը, խոստանում օգնել, սակայն այն պայմանով, որ երկվորյակներ ծնվելու դեպքում թագավորը նրանցից մեկին պետք է տա իրեն: «Քյալ օղլան» հեքիաթում նա թագավորին առաջարկում է ուտել իր տված խնձորի կեսը, մյուս կեսը տալ ուտելու կնոջը, իսկ կճեպները տալ նժույգին. «Դավուշը կ'ըստ կը.- Ես քեզի հետ կապացկութեն կենեն, քեզի էրկու մանչ տղա կուտամ, մեկը քեզի, մեկը ընծի: Ես խնձորը առ քեզի, խնձորը կպճես կը, կպեճները կուտաս ձիուդ, մեկել էրկու դիլիմները մեկը դու կուտես, մեկելը կուտաս կնկանդ: ... Ու խնձորը կերան, կպեճներն էլ ձիուն տվին: Իմն ամիս, ինը սահաթ, ինը դախա աստծով էդ տղեքը գութան աշխարք: Թագավորը կաշե օր ձին ցնկնե՝ երկու քուռակ է բերե»<sup>13</sup>: Նույնը տեսնում ենք Մուշ-Տարոնի ազգագրական շրջանը ներկայացնող «Ահմատ ու Մահմատ» հեքիաթում. «Դերվիշ խնձոր մը կիտա կնկան, թանբիի կենե՝ կեսն ուտե ինք, կեսն էլ իտա ուր էրկան, ուտե: Աստըծով տարին օր թըմավ, թագավորին էղավ էրկու

<sup>11</sup> Հատկանշական է այն հանգամանքը, որ աֆրիկյան շիլուկների ցեղն առաջնորդի անկասելի անկման առաջին նշան էր համարում սեռական թուլությունը, որի ի հայտ գալուն պես շիլուկները սպանում էին արքայիկին՝ հավատալով, որ արքայիկի գառամելու հետ միասին «անասունները կսկսեն հիվանդանալ, կդադարեն բազմանալ, բերքը կփտի դաշտերում, և ավելի շատ մարդ կմեռնի հիվանդություններից» (Ջ. Ֆրեզեր, Ոսկե ճյուղը. մոգության և կրոնի ուսումնասիրություն, Եր., 1989, էջ 318):

<sup>12</sup> Մուշ-Տարոնի ազգագրական շրջանում փեսան պսակի էր գնում եկեղեցի՝ խնձորը ձեռքին բռնած, իսկ առազատ մտնելուց առաջ ազապաշին կիսում էր այդ խնձորը, կեսը տալիս էր ուտելու փեսային, կեսը՝ հարսին (Ե. Լալայեան, Մուշ-Տարոն. ազգագրություն // Ազգագրական հանդես, գ. XXVI, Թիֆլիս, 1916, էջ 168, 173):

<sup>13</sup> ՀԺՀ, հ. IV (Շիրակ), № 33, Եր., 1963, էջ 302:

տղա»<sup>14</sup>: Վ. Բդոյանը նկատում է, որ խնձորի՝ անմահության և նույնիսկ զավակ պարգևելու ունակությունը բուն տոտեմական է<sup>15</sup>:

Ինչպես տեսնում ենք, հեքիաթի միջավայրը հուշում է, որ այս հերոսի համար ծննդից առաջ արդեն իսկ նախասահմանված է փորձությունները հաղթահարողի, այնկողմնային, գերբնական ուժերի դեմ մաքառողի, վիշապամարտիկի և, որ կարևոր է, արքայական իշխանությունը ժառանգողի ճակատագիրը: Վ. Պրոպը նշում է, որ բնության արարիչ ուժից (տվյալ դեպքում՝ խնձորից) ծնված թագավորի տղան հերոս է ի ծնե, հերոս՝ իբրև ազատարար և փրկիչ<sup>16</sup>:

Վերոհիշյալ հեքիաթներում հերոսները երկվորյակներ են. սակայն նրանցից մեկն է, որ անցնում է նվիրագործման փորձությունները: Հեքիաթի հետագա զարգացման ընթացքում՝ եղբայրների ծննդից անմիջապես հետո, մյուս եղբոր մասին հեքիաթը կարծես թե մոռանում է<sup>17</sup>: Հեքիաթի մյուս փոփոխակներում հերոսի հրաշք ծննդի մասին ոչինչ չի նշվում. մի դեպքում նա երեք եղբայրներից կրտսերն է, մյուսում՝ քույր ու եղբայր զավակներից՝ տղան, կամ թագավորի միակ որդին և այլն:

Հերոսի հրաշք ծննդի և կամ այն միջավայրի, որտեղ նա ապրում է, հպանցիկ նկարագրությանը հրաշապատում հեքիաթում գրեթե անմիջապես հետևում է հերոսի հեռացումը տնից. ընդ որում՝ հեքիաթի հերոսի հեռացումն ամենատարբեր մոտիվներով է պատճառաբանվում, ինչպես, օրինակ՝ խորթ մայրն ուզում է ազատվել իր ամուսնու երեխաներից<sup>18</sup>, թագավորի տղաները խախտում են հոր արգելքը՝ չգնալ կորստաբեր ճանապարհով<sup>19</sup> և այլն: Այս հեռացումը պատահական չէ, սա հեքիաթային կանոն է՝ գործողությունների հանգույցը. հերոսն անպայման պետք է հեռանա՝ առավել կատարյալ, նոր՝ ավելի բարձր կարգավիճակով վերադառնալու համար: Սա համապատասխանում է հնագույն ժամանակներում արխայիկ հասարակություններում լայնորեն տարածված, այժմ միայն մշակութապես համեմատաբար ցածր աստիճանի վրա գտնվող ցեղերի միջավայրում կենցաղավարող ինիցիացիայի հնագույն ծեսի<sup>20</sup> ա-

<sup>14</sup> ՀԺՀ, հ. XIII (Տուրուբերան.Մուշ-Տարոն), № 8, էջ 74:

<sup>15</sup> Տե՛ս Վ. Բդոյան, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Եր., 1972, էջ 479:

<sup>16</sup> Տե՛ս **Проп В. Я.** Фольклор и действительность. М., 1976, էջ 237:

<sup>17</sup> Երկվորյակների մասին հայկական հրաշապատում հեքիաթները խմբավորված են Աարնե-Թոմփսոնի համացույցի AT 303 թվահամարի տակ. այստեղ ևս փորձությունները հաղթահարողը մեկն է: Սակայն սովորաբար մմանատիպ սյուժեներում երկվորյակներից մեկը, հեռանալով տնից, թողնում է որևէ նշան՝ նրանով գուշակություն անելու համար. սուր, որի ժանգոտվելու դեպքում իր կյանքին վտանգ է սպառնում, ծառ կամ ծաղիկ, որի չորանալու կամ թոշնելու դեպքում եղբայրը պետք է հասնի օգնության:

<sup>18</sup> Տե՛ս ՀԺՀ, հ. X (Տուրուբերան.Մուշ-Բուլանդիս), № 22, էջ 107-116:

<sup>19</sup> Տե՛ս ՀԺՀ, հ. XII (Տուրուբերան.Մուշ), № 2, էջ 23-28:

<sup>20</sup> Ինիցիացիա (ծագում է լատիներեն՝ *initio* բառից՝ սկսել, ներգրավել)՝ անհատի անցում մի կարգավիճակից մյուսը, մասնավորապես՝ ներգրավում դեմքերի փակ շրջանակ (ցեղի լիիրավ անդամների շարք, քրմերի, շամանների դաս), և ծես, որն ամրագրում է այդ անցումը: Երբեմն նեղ իմաստով նշանակում է անցում ամուսնության ընդունակների շարք: Ինիցիացիայի ծեսերը նաև կոչվում են նվիրագործման կամ անցումային ծեսեր: Այս ծեսերի կառուցվածքային առանձնահատկությունը նրանց եռամասությունն է՝ բնակատեղից անհատի օտարում, փորձությունների հաղթահարում (սահմանային իրավիճակ), այնուհետև՝ վերադարձ նոր կարգավիճակով (տե՛ս **Левинтон Г. А.** Инициация и мифы // Мифы народов мира. Т. 1. М., 1987, էջ 543-544):

ռաջին փուլին, այն է՝ բնակատեղից մեկուսացմանը:

Հեքիաթի այն փոփոխակներում, ուր թագավորը զավակ էր ունեցել դերվիշի շնորհիվ, ըստ պայմանի՝ դերվիշը տղաներից մեկին տանում է իր հետ. ընդ որում՝ այն վայրը, ուր հայտնվում է հերոսը, հեքիաթներում բնութագրվում է հետևյալ կերպ. «Շատ գացին, քիչ գացին, մեկ անվերի սարունը գլուխ մըսաֆըր էղան: Հոնկուց լե իջան, գացին ձորու մը մեջ, տեսան օր սպիտակ քոշկ մը կա շինուկ հողի: Մտան ներս, տեսան օր մարդ չկեր, նե ինս ու նե ճընս մտեր էր հոնի»<sup>21</sup> (շունչ-արարած չկար): Նույն կերպ «Դավրիշին տղան» հեքիաթում դերվիշը տղային տանում է՝ «մին դիւզ, վընչ քաղաք ա, վընչ շեն, մին կենդակ տոն ա, հասար քաշած, դըրբըզան յիրն ըրած»<sup>22</sup>: Այս բնութագրերի ամենամակերեսային դիտարկումն անգամ վկայում է, որ հերոսն ընկել է անդին աշխարհ, մեռյալների թագավորություն: Այնկողմնային աշխարհը հրաշապատում հեքիաթներում միասնական կամ միօրինակ նկարագրություն չունի. հրաշապատում հեքիաթը բազմազան և տարաբնույթ պատկերացումների համակարգ է. այդ աշխարհը կարող է անվանվել Մութ աշխարհ կամ «մին հեռու տընդ»<sup>23</sup>: Հրաշապատում հեքիաթներում հիմնականում այնկողմնային աշխարհի միասնական գիծն այն է, որ այդ աշխարհը ներկայացվում է որպես անբավ հարստության մի վայր, ինչպես օրինակ՝ հերոսը, հայտնվելով դերվիշի տանը, շրջում է սենյակներում և հայտնաբերում անհամար հարստություն՝ ոսկի, արծաթ, նժույզներ. «Տրանա ետը տանը տռները պեց ա անում, տըեսնում հինչ հարստություն, էլ վըեսկես վըե՞րն ա, արծաթըս, բըըլյանտս վըերը, ախշարքես տակեն հինչ թինգյանկան պեներ ասես, տըեղ կա»<sup>24</sup>:

Համադրելով հիմնական և հավելյալ դիպաշարերի ընձեռած նյութը՝ հետաքրքիր դիտարկումներ կարող ենք կատարել այն երևույթի մասին, ինչն անվանվում է ժամանակավոր մահ կամ սահմանային վիճակ, քանզի նվիրագործման ծեսի երկրորդ՝ ծիսական փորձությունների հաղթահարման փուլն ամենամեծ իմաստավորվում է որպես այց անդին աշխարհ և ժամանակավոր մահ: Այս իմաստավորումը յուրահատուկ դրսևորումներ ունի հայկական հրաշապատում հեքիաթներում: Ինչպես վերը նշվեց, դիպաշարի որոշ տարբերակներում հեքիաթային հերոսն այնկողմնային աշխարհ է տարվում դերվիշի միջոցով. «Քեչլիկ» հեքիաթում թագավորի տղան, անցնելով «վնասավոր» ճանապարհով, ճանապարհի վերջում հանդիպում է մի ծերունու, որի մասին շեշտվում է, թե՛ «հավոր վիշապ ա, մարդ կուտա»<sup>25</sup>: Բուլանդից և Վասպուրականից գրառված «Քաչլիկի հեքիաթ»<sup>26</sup> և «Կոր պառավ»<sup>27</sup> հեքիաթներում հերոսն ամայի բերդում հանդիպում է մարդակեր կույր պառավին: Բոլոր այս կերպարները հեքիաթային արծագանքներն են ծիսական միջավայրում ծեսն իրականացնող ծիսարարի, սակայն գործողությունների հակադիր իմաստավորմամբ և ըմբռնմամբ: Իր ժամանակում ընդունելի և ընկալելի, պարտադիր համարվող վաղնջա-

<sup>21</sup> ՀԺՀ, հ. XIII (Տուրուբերան.Մուշ-Տարոն), № 8, էջ 77:

<sup>22</sup> ՀԺՀ, հ. VI (Արցախ-Ուտիք), № 23, էջ 117:

<sup>23</sup> ՀԺՀ, հ. VII (Արցախ-Սյունիք), № 22, էջ 89:

<sup>24</sup> Նույն տեղում:

<sup>25</sup> ՀԺՀ, հ. XII (Տուրուբերան.Մուշ), № 2, էջ 23:

<sup>26</sup> Տե՛ս ՀԺՀ, հ. X (Տուրուբերան.Մուշ-Բուլանդիս), № 22, էջ 107-116:

<sup>27</sup> Տե՛ս ՀԺՀ, հ. XIV (Վան-Վասպուրական), № 29, Եր., 1999, էջ 314-320:

կան այս ծեսը հետզհետե իմաստագրկվել է, ծիսարարի՝ գաղտնիքները, առասպելներն ու հավատալիքները նվիրագործվողին փոխանցողի դերը ոչ միայն նսեմացվել, այլև ուշ շրջանի պատկերացումներում ընկալվել է որպես չար և մութ ուժերի անձնավորում, ով աշխատում է կործանել հերոսին. վերը նշված «Ղազըեր պահող տղան», «Թաքավրերն ու դավրիշը» հեքիաթներում շեշտվում է, որ դերվիշն ուզում է տղային նետել բոցավառ թոնիրը: Այս մոտիվը հրաշապատում հեքիաթում պահպանված, նվիրագործման ծեսերին բնորոշ կրակի փորձության վերապրուկն է, կրակի միջոցով մահ-վերածնունդ ապրելու, կրակի մաքրագործող և երիտասարդացնող գործության հանդեպ հավատալիքի արտացոլումը: «Թագավորի փոքր տղան»<sup>28</sup> հեքիաթում ջրհորն իջած փոքր եղբայրը ուշաթափվում է հորում, վերոհիշյալ «Կոր պառավ» հեքիաթում հերոսը քուն է մտնում խորունկ անտառում, ուր նրան թողել էր հայրը: Ուշաթափությունը և քունը ևս իմաստավորվում են որպես ժամանակավոր մահ:

Հատկանշական է, որ, ըստ հեքիաթի, հենց մեռյալների թագավորությունում է, որ հերոսը ձեռք է բերում հրաշագործ օգնական. դա հիմնականում կրակի տարերքն անձնավորող հրեղեն ձին է (տարբերակներում՝ ծովեղեն, քամեղեն): Նա է, որ AT 530 A թվահամարին համապատասխանող հայկական հեքիաթներում հերոսին փրկում է դերվիշի հետապնդումից և այնկողմնային աշխարհի սահմանը հատելով՝ նրան Լույս աշխարհ է դուրս բերում. «Տղեն կը քաշե զքամեղեն ձին ի դուս, կը թամբե, կը թռնա ու յալա՛, քամու պես կերթա»<sup>29</sup>: Ձին միմյանց է կապում այս և այնկողմնային աշխարհները և երկու աշխարհների միջնորդ է: Վ. Պրոպը նշում է, որ անդրաշխարհում ձեռք բերված իրերից հնագույնը կենդանու մարմնի մասն է, տվյալ դեպքում՝ ձիու մազը, ինչը, նույնական լինելով ողջ կենդանուն, հերոսին իշխանություն է տալիս նրա նկատմամբ<sup>30</sup>: Լույս աշխարհի դուրս բերելով նրան՝ օգնականը հայտնվում է ամեն անգամ, երբ հերոսը կրակին է տալիս նրա մազը<sup>31</sup>:

Ըստ հիմնավորց հավատալիքի՝ մարդը, որն այցելել է անդին աշխարհի և կարողացել վերադառնալ, հրաշագործ հատկություններ է ձեռք բերում. տվյալ դեպքում գործ ունենք այդ հավատալիքի հեքիաթային մեկնաբանության հետ. հրեղեն, ծովեղեն և քամեղեն ձիերին օգնական ունենալը կարող է խորհրդանշական իմաստ ունենալ, այն է՝ այնկողմնային աշխարհի փորձություններն անցած հերոսը կարողանում է սանձահարել և իրեն ծառայեցնել տարերքները:

Հայկական հրաշապատում հեքիաթն արտացոլել է անդրաշխարհի իջնելու երբեմնի հավատալիքը. դա պարզ է դառնում մեռյալների թագավորության վերոհիշյալ նկարագրություններից: Բացի այն բանից, որ հե-

<sup>28</sup> Տե՛ս ՀԱԲ, հ. 16 (Մուսա լեռ), № 6 (6), եր., 1984, էջ 47-51:

<sup>29</sup> ՀԺԴ, հ. X (Տուրուբերան.Մուշ-Բուլանըխ), № 22, էջ 109:

<sup>30</sup> Տե՛ս **Проп В. Я.** Исторические корни волшебной сказки. Л., 1946, էջ 173-176:

<sup>31</sup> Ըստ **Թ. Հայրապետյանի**՝ հայկական հրաշապատում հեքիաթներում ծիսական փորձությունների փուլում հայտնված հերոսի մասին տեղեկատվություն են ստանում կրակի միջոցով. կրակը հայկական հեքիաթներում հանդես է գալիս իբրև ժամանակի և տարածության մեջ տեղեկատվություն փոխանցող ցուցիչ (տե՛ս **Թ. Հայրապետյան**, Տեղեկատվական և տարածաժամանակային տարրերը հայ ժողովրդական հեքիաթներում // Լրաբեր հասարակական գիտությունների, 2006, № 3, էջ 161-171):

քիաթներում այն աշխարհը, ուր հայտնվել է հերոսը, արտաքուստ հստակորեն ներկայացվում է որպես անդրաշխարհ, մեռյալների երկիր իջած և վերադարձած հեքիաթային հերոսն ավելի զորեղ ապացույցներ ունի առ այն, որ նա եղել է այդ աշխարհում, տեսել այն (անցել ժամանակավոր մահվան փուլով) և հաղթահարելով փորձությունները՝ վերադարձել: Յեքիաթի հերոսը գրեթե միշտ վերադառնում է մազերը և ճկույթ մատը ոսկեզօծած: Վերոհիշյալ «Քաչիկի հեքիաթում» հերոսը հասնում է «բարձր անվերի սարի մե», մտնում սարի գլխին գտնվող բերդը, շրջում՝ «...կը տեսնա օր յաղբյուր մե կը չռա, ճկութն օր թաթխե մըջ ջրին, կը դառնա օսկի, գուր ծամեր կը բռնե դեն, կդառնա օսկի»<sup>32</sup>: Վան-Վասպուրականի ազգագրական շրջանը ներկայացնող «Կոր պառավ» հեքիաթում պառավի տանը հերոսը «...կտիսնա որ ինչ. ոսկի գյուռ, ոսկի գյւրին դան տրուկ, խրեղեն ծի մի էլ կապուկ էնտեղ: ... Լաճն ի, ուր ճկոթ, ուր բրչամ կթաթղի մեջ գյռան, ծին կքաչի ոյուս, կխեծնի...»<sup>33</sup>: Եթե հերոսը չի էլ ոսկեզօծում մազերը, այնուամենայնիվ ստորգետնյա աշխարհից նա իր հետ ոսկյա իրեր է բերում. «Անմահական խնձոր»<sup>34</sup>, «Քաչիկի հեքիաթ»<sup>35</sup>, «Սինամահավթ»<sup>36</sup> հեքիաթներում հերոսը, հայտնվելով Մութ աշխարհում, մեռածարտում է դևերի հետ և փրկում երեք արքայադուստրերին: Արքայադուստրերն իբրև պարզև նրան ոսկյա իրեր են նվիրում: Նմանատիպ օրինակներ կարող ենք երկար թվարկել: Անդրաշխարհի հետ կապված այս բոլոր իրերը ոսկուց են, հետևաբար՝ ոսկեզօծ են նաև անդին աշխարհ այցելած հերոսի մազերն ու մատները, ոսկյա են այնտեղից բերված իրերը. ոսկին հայկական հրաշապատում հեքիաթներում անդրաշխարհի ցուցիչ է: Վ. Պրոպը ևս, գտնելով, որ ոսկին հեքիաթներում «այն աշխարհի» ցուցիչ է, միաժամանակ նշում է, որ անդին աշխարհից ոսկյա իրեր բերելու մոտիվը բխում է առհասարակ այդ աշխարհից բերված իրերի հմայական հատկությունների՝ երկարակեցությունն ու անմահությունն ապահովող հավատալիքից, ինչը հրաշապատում հեքիաթներում մասամբ է միայն պահպանվել<sup>37</sup>:

Սովորաբար արքայադուստրն ուզում են ամուսնացնել կեղծ հերոսի հետ, ով ներկայանում է որպես նրա ազատարար, և միայն հերոսի մոտ գտնվող ոսկյա իրերն են բացահայտում իրական ազատարարին. արքայադուստրը տեսնում է իր և իր քույրերի ոսկյա իրերը և հասկանում, որ իր ընտրյալը կարողացել է հաղթահարել փորձությունները և դուրս գալ Մութ աշխարհից: Այսպիսով՝ ոսկով ճանաչվում է իրական հերոսը՝ արքայադուստրերի փրկիչը, նրանց ստորգետնյա գերությունից ազատողը, ասել է թե՛ ոսկին հերոսի՝ անդրաշխարհում լինելու ապացույցն է: AT 530 A թվահամարի հայկական հեքիաթներում հատկանշական է այն փաստը, որ հերոսը ոսկեզօծում է իր մազերն ու ճկույթը, ինչն ավելի արխայիկ մոտիվ է. ճկույթն առասպելաբանական առումով համարվում է միջնորդ երկու աշ-

<sup>32</sup> ՀԺՀ, հ. X (Տուրուբերան. Մուշ-Բուլանըխ), № 22, էջ 108:

<sup>33</sup> ՀԺՀ, հ. XIV (Վան-Վասպուրական), № 29, էջ 316:

<sup>34</sup> Տե՛ս ՀԺՀ, հ. II (Այրարատ), № 1, Եր., 1959, էջ 23-38:

<sup>35</sup> Տե՛ս ՀԺՀ, հ. IV (Շիրակ), № 27, Եր., 1963, էջ 244-256:

<sup>36</sup> Տե՛ս ՀԺՀ, հ. IX (Բագրևանդ. Ալաշկերտ, Մանգլեքտ, Բաղեշ), № 1, Եր., 1968, էջ 13-34:

<sup>37</sup> Տե՛ս **Проп В. Я.**, նշվ. աշխ., էջ 276:

խարհների միջև և ունի որոշակի ծիսական արժեք<sup>38</sup>: Եկույթի և մարդկային կյանքի ու անհատականության խորհրդանիշ մազերի ոսկեգոծումը, իհարկե, հակառակ աշխարհին հաղորդակցվելու փաստ է և ոչ միայն. բարձրագույն իշխանության, կատարելության, գեղեցկության, արևի խորհրդանիշ ոսկին այստեղ վկայությունն է կարգավիճակի փոփոխման՝ հասունացման և ապագա իշխանության կանխանշան է, որովհետև, ի տարբերություն հրաշապատում հեքիաթների ոսկեգանգուր այլ հերոսների, որոնք ոսկեմազ են ի ծնե, ուսումնասիրվող հերոսը դառնում է ոսկեգիսակ, և դա պատահական չէ. նա անդրաշխարհից վերադառնում է ոչ իբրև սովորական մի անհատ, նա վերադառնում է իբրև նոր և ավելի կատարյալ մեկը, ավելին՝ վերադառնում է որպես ապագա թագավոր, արքա-արև՝ իր կերպարով նաև հարելով հայոց բանահյուսության մեջ զգալի տարածում ունեցող արեգակի ոսկեկերպար անձնավորումների շարքին<sup>39</sup>. «Անու նմուշ էրեգանկան պես կը բըրըղկըտեր»<sup>40</sup>, - նշվում է վերոհիշյալ՝ «Կյուն գըլխիկ» հեքիաթում: Յետաքրքիր և հատկանշական է նաև վերը նշված՝ «Ղազըեր պահող տղան» հեքիաթը, որտեղ «շատ մաշված», այսինքն՝ ֆիզիկապես թույլ և նիհար հերոսը, անցնելով անդին աշխարհի փորձությունները, ոչ միայն ոսկեգոծում է մազերը, այլև գեղեցկանում դեմքով, ուժեղանում և առնականանում ֆիզիկապես. «Շորերը հանում ա, նի մնում էտ ճիրին տակեն լղանում, ամենն հինչ փոխվում ա, դուվաթավ ա տըեռնում, իրեսը դիշինգյանում ա, մազերը կռուզնոտ, վըսկըքյանքյուլ տըեռնում»<sup>41</sup>:

Այսպիսով՝ հերոսի մազերի ոսկեգոծումը քննարկվող հեքիաթներում ունի սիմվոլիկ-առասպելաբանական իմաստավորում՝ զուգորդվելով անդրաշխարհյան-ծիսական-նախասանունական փորձություններին, կերպարին հաղորդելով արևային հերոսին բնորոշ գծեր, ձեռք բերելով արքայական իշխանության խորհրդանիշի արժեք:

Մազերը ոսկեգոծած հերոսն անդրաշխարհից դուրս գալուն պես թաքցնում է դրանք՝ ծածկելով գլուխը և ստեղծելով ճաղատության տպավորություն: Յեքիաթների հետագա շարադրանքում՝ մինչև ճշմարտությունը պարզվելը, նրան այդպես էլ կոչում են՝ Քաչլուկ, որը կարծես նրա համար անձնանուն է դառնում: Վերոհիշյալ «Քյալ օղլան» հեքիաթում պատմվում է, թե ինչպես հերոսը հանդիպում է հովվին. «Կերթա կը տեսնե օր հովիվըն օխչար կարծեցնե կը, հովիվին կըսե կը. - Ընձի մեկ գառըն մորթե: ... Էդ գառի փորը կառնե՝ իրեն գլուխը կը դնե, կեղնի Քյալ օղլան»<sup>42</sup>: «Անժառանգ թագավոր» հեքիաթում ևս հերոսը հանդիպում է հովվին և նրանից խնդրում գառան ստանոքսը. «Թաքավորի տղեն գառու փոր տարավ հառուն, լավ լվաց, խաքուց հուր գլուխ, հելավ քաչլիկ»<sup>43</sup>:

<sup>38</sup> Տե՛ս **Ս. Հարությունյան**, Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000, էջ 307:

<sup>39</sup> Տե՛ս **Ս. Հարությունյան**, Ոսկին հայ վիպական ավանդության մեջ // Հին Հայաստանի ոսկին, Եր., 2007, էջ 303-305:

<sup>40</sup> ՀԺՀ, հ. XVII (Սոկոս), № 39, էջ 357:

<sup>41</sup> ՀԺՀ, հ. VII (Արցախ-Սյունիք), № 22, էջ 89:

<sup>42</sup> ՀԺՀ, հ. IV (Շիրակ), № 33, էջ 303-304:

<sup>43</sup> ՀԱԲ, հ. 14 (Գեղարքունիք), № 6 (14), էջ 88:

Մազերն ավանդաբար համարվել են հոգու ապաստարան, մարդկային էության և կենսական ուժերի խտացման կետ<sup>44</sup>: Սրանից բխում է մազերը կտրելիս մի փոքրիկ փունջ թողնելու հավատալիքը, որն իբրև թե պիտի ծառայեր որպես հոգու ապաստարան<sup>45</sup>: Մազերը կտրելը կամ գլուխն ամբողջովին սափրելը նվիրագործման ծեսերի բնորոշ և տարածված գիծն է: Ծեսի ժամանակ կտրել մազերը նշանակում էր՝ առանձնաձև նախկին աշխարհից, կորցնել նախկին էությունն ու անհատականությունը, «մեռնել նախկին կյանքի համար», «ոչնչանալ նախկին կարգավիճակում»<sup>46</sup>: Ինչպես տեսնում ենք, հրաշապատում հեքիաթն արտացոլել է ծիսական այս մանրամասնը, ինչը հեքիաթային հերոսի՝ անդրաշխարհից վերադառնալու կարևորագույն պայմաններից մեկն է՝ որպես անճանաչելիությունն ապահովող հզոր գրավական: Վերադառնալ առանց մազերի, ասել է թե՛ վերադառնալ անճանաչելի այն միջավայրի համար, ուր նվիրագործվողը վերադառնում է որպես նոր մարդ: Մազերից զրկված, իբրև թե ճաղատ գլխով և անճանաչելի վերադառնալը հրաշապատում հեքիաթն արտացոլել է յուրահատուկ ձևով. հերոսը ծածկում է մազերը կենդանու ստամոքսով. և՛ նշված թվահամարի հեքիաթներում, և՛ այլ դիպաշարերում սա կայուն, անփոփոխ, կարելի է ասել՝ քարացած մոտիվ է: Հերոսի ճաղատությունն ապահովվում է միայն և միայն այս կերպ: Ճաղատ ձևանալու ուրիշ որևէ ձև հայկական հրաշապատում հեքիաթը չգիտի, և, ենթադրում ենք, սա պատահական չէ: Վերը նշվեց, որ ծիսական փորձություններն ընկալվում էին որպես մուտք անդրաշխարհ: Նախնական, տոտեմական հավատալիքների փուլում այնպիսի միջավայրի աշխարհն անձնավորված էր որպես հրեշ կամ գազան, որը կլանում էր նվիրագործվողին և նորից վերադարձնում. նվիրագործվողը հայտնվում էր հրեշի ներսում, ինչը նույնական էր մահվան թագավորության մեջ գտնվելուն: Մազերը կենդանու փորոտիքով ծածկելու մոտիվը, ճաղատության պատրանք ստեղծելու ռացիոնալ գործառնության բացի, հավանաբար զուգորդվում է վերոհիշյալ հավատալիքին<sup>47</sup>, քանզի անդրաշխարհի բնութագրումները՝ որպես ճերմակ պալատ, մենավոր տուն կամ բերդ, ավելի ուշ շրջանի պատկերացումների արդյունք են: Որոշակի խումբ հայկական հեքիաթներում ևս հանդիպում է կենդանու կողմից կլանվելու հավատալիքը, ինչպես, օրինակ, «Երեմեա թակավոր»<sup>48</sup> հեքիաթում. այստեղ խորթ մայրն աղջկան նետում է ծովը, որտեղ նրան կուլ է տալիս հսկա ձուկը: Այս առումով առավել հատկանշական է նուտկա ցեղից (Ամերիկա) գրառված առասպելը. հերոսի մորը ծովում նավակով զբոսնելիս կուլ է տալիս կետը: Հերոսը, իմանալով այդ, եղբայրների հետ ծով է դուրս գալիս՝ մորը փնտրելու: Կետը նրանց ևս կուլ է տալիս: Եղ-

<sup>44</sup> Բորչալուի գավառում (Աերկայիս Լոռի) հարսանեկան փեսաթրաշի ժամանակ թափված մազերը խնամքով հավաքում էին և այնպիսի տեղ դնում, որ մարդու ոտք չդիպչեր. հակառակ դեպքում փեսան «կկոխվեր», այսինքն՝ կկորցներ առնական գորությունը (տես **Ե. Լալայեան**, Բորչալուի գաւառ // Ազգագրական հանդէս, գ. IX, Թիֆլիս, 1902, էջ 232):

<sup>45</sup> Տե՛ս **Ջ. Ֆրեզեր**, նշվ. աշխ., էջ 279-284:

<sup>46</sup> **Геннеп А.** Обряды перехода. М., 1999, էջ 152:

<sup>47</sup> Այս միտքը մեզ հուշել է բանահյուսության տեքստաբանության բաժնի վարիչ Թամար Հայրապետյանը, ինչի համար շնորհակալություն ենք հայտնում:

<sup>48</sup> Տե՛ս ՀԺՀ, հ. XV (Վան-Վասպուրական), № 70, Եր., 1998, էջ 397- 402:



բայրները հսկա ձկանը սպանում են, ազատում մորը, իրենք ևս դուրս գալիս նրա որովայնից: Լույս աշխարհ վերադառնալուց հետո տեսնում են, որ եղբայրներից մեկն ամբողջությամբ կորցրել է գլխի մազերը<sup>49</sup>:

Անդրաշխարհից վերադարձած հեքիաթային հերոսին իր նոր արտաքինով ոչ ոք չի ճանաչում: Նա դառնում է թագավորի սագարած կամ ոսկերչի աշակերտ: Այս հեքիաթներում թագավորի փոքր աղջիկը, պատահաբար տեսնելով ոսկեգանգուր հերոսին, ընտրում է նրան որպես ամուսին՝ հարուցելով թագավոր հոր զայրույթը, ով իր երկու ավագ փեսաներին միմի պալատ է նվիրում, իսկ հերոսին ու կրտսեր աղջկան «խնայում տու մ'իտու»<sup>50</sup>: Հերոսին քամահրանքով են վերաբերվում ամենքը. երբ հիվանդանում է թագավոր հայրը, ավագ փեսաները հանձն են առնում բերելու բուժամիջոցները, պատրաստակամություն է հայտնում նաև կրտսեր աղջկա ամուսինը: Նրա վրա ծիծաղում են և տալիս քոսոտ ջորին ու մի ժանգոտ թուր. հեքիաթի միջավայրում թագավորի ավագ փեսաների և հերոսի հակադրությունը խիստ ընդգծված է: Հակադրության այս ֆոնի վրա առավել ցայտուն է դրսևորված հերոսի առաքելությունը: Այս առումով հատկապես ուշագրավ են արքայական բուժամիջոցները՝ հրաշապատում հեքիաթներում հաճախակի հանդիպող առասպելաբանական երկու խորհրդանիշները՝ առյուծը և արծիվը: Երկուսն էլ արքայության խորհրդանիշներ են, և միայն նրանց կաթն ու միսը կարող են բուժել արքային<sup>51</sup> (տարբերակներում՝ Սինան հավքի կաթ, սև կխտարի միս, եղնիկի կաթ): Առավել հատկանշական են անմահության ջուրն ու խնձորը. սրանք բերելու համար պետք է հատել այս աշխարհի սահմանագիծը և գործ ունենալ այնպիսի միջոցներ, որոնք հետ: Իսկ դա կարող է անել միայն անդրաշխարհյան փորձությունները հաղթահարած, գերբնական կարողություններ ձեռք բերած նվիրագործյալ հերոսը՝ իր հրաշագործ օգնականի՝ նժույգի օգնությամբ: Այս դեպքում թագավորի երկու փեսաները մատնված են անգործության. հակադրության այս համապատկերում ուշագրավ է վերոհիշյալ «Քաչիկի հեքիաթը». հերոսը հայտնվում է երկու աշխարհների սահմանագծում, ուր երկինքն ու երկիրը միմյանց կապող տիեզերական ծառն է՝ զագաթին Սինամահավքի բույնը, արմատների մոտ՝ վիշապ օձը: Տղան սպանում է օձին, կտոր-կտոր անում մարմինը և փրկում հավքի ձագերին. «Կը տեսնա օր վիշապ մե գիկա, քընց ձիթխըծի գերան: Օձ հըտ հասնելուն կը փաթվի ծառնուվի ու կը բանձրնա վերև, հավքու ձգեր հմալ ուրուտութ մե կը դնին, հմալ կը ճվճվան, օր քաֆրի ջիգար կը փըռթի: Կառնե զուր թուրն ու գընկնա օձի վրեն, զարկ-զարկ-զարկ, զօձ թութնի պես կը բրդե թալե մեկ

<sup>49</sup> Տե՛ս **Пропи В. Я.**, նշվ. աշխ., էջ 217: Հերակլեսի սխրանքների մասին պատմող առասպելի տարբերակներից մեկում պատմվում է, որ տրոյական արքա Լաոմեդոնի դստերը՝ Հեսիոնեին փրկելու համար նա նետվում է ծովային հրեշի երախը. հրեշի որովայնում գտնվելու հետևանքով հերոսի մազերը թափվում են, և նա ճաղատանում է (տես **Зайцев А. И.** Геракл // Мифы народов мира. Т. 1. М., 1987, էջ 277-283):

<sup>50</sup> ՀԺՀ, հ. XVII (Մոկս), № 39, էջ 363:

<sup>51</sup> Հայկական հրաշապատում հեքիաթներում առյուծի կաթը հաճախ է հանդես գալիս որպես ուժ և զորություն պարզևող հրաշագործ բուժամիջոց. այսպես՝ «Ասլան-Բալասի» վերնագրով հեքիաթում բանասացը, հերոսի ուժը պայմանավորելով առյուծի կաթով սնված լինելու հանգամանքով, միջանկյալ խոսքով նաև նշում է. «Հըմի ինչ թավուր հիվանդ որ մի ստաքան ասլանի կաթ խմի՝ նա էն հաղաղը կսաղանա: Էն ինչ ասել են անմահական կաթը, էն ասլանի կաթն ա» (ՀԺՀ, հ. VIII, № 22, էջ 143):

դեն...»<sup>52</sup>: Հեքիաթային այս մոտիվը հերոսին բնութագրում է նաև որպես վիշապամարտիկ: Երախտագետ Սինամահավքն օգնում է վիշապամարտիկ հերոսին՝ ձեռք բերելու անմահական խնձորը: Հրաշագործ բուժամիջոցները բերելուց հետո հերոսը մեծ-մեծակ հաղթում է թշնամական զորքին, այն դեպքում, երբ ավագ փեսաները ևս մեկ անգամ ձախողվում են: Սա զորեղ ու կատարյալ հերոսի ուժի՝ յուրովի՝ հեքիաթային ցուցադրությունն է, ինչը հավելյալ դիպաշարին պատկանող «Թագավորի փոքր տղան»<sup>53</sup>, «Չնչնլ Սիրոն»<sup>54</sup>, «Անմահական խնձոր»<sup>55</sup> հեքիաթներում արտահայտվել է ձիախաղ-մրցույթով՝ ջիրիդով, ուր հերոսը հաղթում է ոչ միայն իր եղբայրներին, այլև արքայադստեր մյուս բոլոր փեսացուներին: Նրա բոլոր այս գործողություններն ունեն մեկ՝ իր նոր կարգավիճակի ամրապնդման և իր առավելության ապացուցման նպատակ. հերոսը դիմանում է նաև գահը ժառանգելու համար բոլոր անհրաժեշտ փորձություններին: Այս ամենի արդյունքում բացահայտվում է ճշմարտությունը. նա վերականգնում է իր նախկին արտաքինը և ստանում արքայական գահը:

Այսպիսով՝ հայոց հրաշապատում հեքիաթներում այս հերոսի ոչ սովորական՝ գերբնական ծնունդը նրան բնորոշում է իբրև ազատարարի և վիշապամարտիկի: Կերպարի ծագման ակունքները հասնում են մինչև վաղնջական ժամանակները՝ կապվելով նվիրագործման խորհրդածեսին. ըստ այդմ՝ հերոսի գործողությունները՝ հեռացումը տնից, այլ աշխարհում հայտնվելը և անճանաչելիորեն փոխված վերադառնալը զուգորդվում են ծեսի երեք հիմնական փուլերին: Հայոց հրաշապատում հեքիաթի խորհրդանշալի համակարգում յուրովի են ներկայացված և իմաստավորված այնպիսի աշխարհը (ճերմակ պալատ, մեծավոր տուն), ծիսական փորձությունները (քուն և ուշաթափություն-ժամանակավոր մահ), հերոսի վերադարձն ու զահաժառանգումը:

**ЛИЛИТ МКРТУМЯН – Опыт анализа героя армянской волшебной сказки.** – В статье анализируется герой волшебных сказок, записанных в различных регионах Армении: «Сын Дарвиша» (Арцах–Утик), «Шахвелад и Банглибар» (Гугарк–Лори), «Ахмат и Махмат» (Муш–Тарон) и т. д. Исследуемая сказка имеет более десяти вариантов и соответствует номеру 530-А по международной классификации сказок Аарне и Томсона. Её герой попадает в потусторонний мир, где приобретает помощника – волшебного коня, омывается потусторонней водой, отчего его волосы и мизинец становятся золотыми. По возвращении облик героя становится неузнаваемым, поскольку покрывший его голову желудок ягнёнка создаёт впечатление лысины. Герой женится на принцессе и наследует престол. Анализируемые мотивы имеют глубокие историко-этнографические и ритуальные корни. Приключения героя соответствуют трём стадиям инициации – расставанию с родным домом, испытаниям (потусторонний мир и временная смерть) и возвращению в новом облике.

<sup>52</sup> ՀԺՀ, հ. X (Տոկոսբերան, Մուշ-Բուլանդիս), № 22, էջ 112:

<sup>53</sup> Տե՛ս ՀԱԲ, հ. 16 (Մուսա լեռ), № 6 (6), էջ 47-51:

<sup>54</sup> Տե՛ս ՀԺՀ, հ. XIV (Վան-Վասպուրական), № 40, էջ 342-358:

<sup>55</sup> Տե՛ս ՀԺՀ, հ. II (Այրարատ), № 1, էջ 23-38:

**LILIT MKRTUMYAN – *On the Analysis of an Armenian Fairytale Character.* –**

The given article is devoted to the analysis of a very interesting character of Armenian fairytale, found in narrative tradition of many ethnographic regions of Armenian (*Dervishin Tghan/Son of Dervish* from Artsakh-Utic *Shahvelad and Banglibar* from Gugark-Lori, *Ahmat and Mahmat* from Mush-Taron and others). This tale corresponds to Type 530A according to Aarne and Thompson's international classification of tale types and has more than 10 variants. The hero appears in the other possible world, where he gets a magic helper – a steed, then he washes in the waters of the other world and, as a result, his hair and the little finger turn golden. On coming back his appearance changes. He covers his head with a slaughtered lamb's stomach which makes him look like bald and unrecognizable. He marries the princess and becomes a king. The deep analysis of the character proves that all the stages of changing are connected with the three stages of initiation ritual – leaving the native land, overcoming the difficulties (which is perceived as getting in the other world and temporary death), and the last stage as coming back in a new status. All these and other motifs observed in the variants of the tale have deep historical and ethnographic roots which are discussed in the article.